MARY KAY
Phone: 060-66 00 01
e-mail: Helpdesk.Armenia@mkcorp.com

Mary Kay® ընկերությունը ներկայացնում է գիտական հետազոտությունների գծով նոր գլխավոր կառավարչին

Mary Kay®-ը՝ գեղեցկության համաշխարհային բրենդը, որն ուղիղ վաճառքներ է իրականացնում ավելի քան 40 երկրում, ներկայացնում է կեսաբանական գիտությունների թեկնածու Լյուսի Գիլդեային՝ գիտական հետազոտությունների գծով գլխավոր կառավարչին:

Լյուսի Գիլդեան կգլխավորի համաշխարհային ռազմավարության մշակումն ու իրականացումը, որն ուղղված կլինի արտադրանքի բարելավմանն ու արտոնագրերի քանակի ավելացմանը՝ այսպիսով ամրապնդելով գեղեցկության ոլորտում ուղիղ վաճառքի գլխավոր նորարարներից մեկի՝ Mary Kay®-ի կարգավիճակը: Լյուսի Գիլդեան կմշակի և կիրականացնի Mary Kay®-ի արտադրանքի և արտադրության համաշխարհային ռազմավարությունը, որն ունի արտադրանքի, տեխնոլոգիայի և փաթեթների դիզայնի ավելի քան 1300 արտոնագիր, ինչպես նաև 130 արտոնագիր, որոնք տրամադրվել են միայն 2016 թվականին:

Mary Kay® ընկերության մատակարարման շղթայի գլխավոր ղեկավար Թոմաս Չոն ասում է. «Լյուսի Գիլդեայի աշխատանքային փորձը և կոսմետիկայի ոլորտում գիտական հետազոտությունների բարձր արդյունավետությունը թույլ կտան ավելացնել Mary Kay®-ի նորարար ապրանքների ու տեխնոլոգիաների արտադրությունը, որոնք հաճախորդները չեն կարողանա գտնել այլ ընկերություններում: Միջազգային շուկայում Լյուսիի փորձը և նրա գլոբալ տեսլականը շատ գնահատելի են, քանի որ Mary Kay®-ը շարունակում է ընդլայնվել և ձգտում է բոլոր շուկաներում հասկանալ հաճախորդների ցանկությունները»:

Mary Kay®-ի գիտական հետազոտությունների գծով գլխավոր կառավարիչ Լյուսի Գիլդեան ասում է. «Գիտական հետազոտությունների գծով գլխավոր կառավարիչ աշխատելու հնարավորությունը ինձ թույլ է տալիս ամբողջովին տրվել կանանց ոգեշնչող գիտության և նորարարությունների հանդեպ իմ կրքին: Ղեկավարելով Mary Kay®-ի համաշխարհային հետազոտություններն ու նորույթները՝ ես ուրախ եմ լինել նորարարության առաջնագծում՝ ստեղծելով գեղեցկության ապրանքներ, որոնք ամբողջ աշխարհում ոգեշնչում են Գեղեցկության մեր Խորհրդատուներին և նրանց հաճախորդներին»:

MARY KAY
Phone: 060-66 00 01
e-mail: Helpdesk.Armenia@mkcorp.com

	Լյուսի Գիլդեան ունի Procter & Gamble ընկերության 15 տարվա աշխատանքային փորձ առողջապահության, բերանի հիգիենայի, ինչպես նաև գեղեցկության տեխնոլոգիաների և մաշկի խնամքի արտադրանքի և դիմահարդարման պարագաների մշակման ոլորտներում: Procter & Gamble-ում աշխատելու ընթացքում Լյուսին ապրել է Սինգապուրում՝զարգացնելով իր փորձը ասիական շուկայում: Լյուսի Գիլդեան ստացել է կենսաբանության բակալավրի աստիճան Ջորջթաունի քոլեջում և բջջային և մոլեկուլային կենսաբանության, իմունոլոգիայի և վարակիչ հիվանդությունների գիտությունների թեկնածուի աստիճան՝ Ցինցինատիի համալսարանում: Լյուսին Դալլաս կտեղափոխվի ամուսնու և երեխաների հետ:

Տեղեկություն Mary Kay® ընկերության մասին.

Mary Kay® ընկերության հաջողության հիմքում հիանալի արտադրանքն է, ընկերության հետ բիզնեսի հասանելի հնարավորությունն ու սոցիալական պատասխանատվությունը: Ավելի քան 53 տարի աշխարհի 40 երկրում Mary Kay® ընկերությունը ներշնչում է կանանց սեփական բիզնեսում հասնել իրենց նպատակներին: Որպես մի քանի միլիարդ շրջանառություն ունեցող ընկերություն՝Mary Kay®-ն առաջարկում է մաշկի խնամքի, դեկորատիվ կոսմետիկայի և օծանելիքի վերջին նորույթները: Իմացեք ավելին Mary Kay®-ի մասին www.marykay.am: